Արձանագրություն N2
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան,

26.11. 2021թ.
ժամը՝ 16.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանջանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մելիքյան, Տ. Ձիլավյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դրամբյան

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Ա. Օհանջանյանը,

---

1. Ընդունել Ի գիտություն, որ Ընթացակարգը 26.10.2021թ. բողոքարկվել էր <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից: Բողոքը բավարարվել է և առաջարկվում է հանձնաժողովին ուսումնասիրել բողոքի վերաբերյալ կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 որոշումն ու կայացնել համապատասխան որոշում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2. Ուսումնասիրելով ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 որոշումը (այսուհետև՝ Որոշում), հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

1) բողոքարկվել են ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինները և բողոքի պահանջը եղել է հրավերում փոփոխություններ կատարելը 1-ին չափաբաժնի համար մատակարարման ժամկետի մասով, իսկ 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար տեխնիկական բնութագրերի մասով:

2) Բողոքը բավարարվել է հետևյալ բովանդակությամբ.

<< Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի հրավերը՝ վեճի առարկա հանդիսացող 2-րդ, 5-րդ և 6-րդ չավաբաժինների մասով տեխնիկական բնութագրերը, իսկ 1-ին չափաբաժնի մասով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը պետք է փոփոխել կամ դրա անհնարինության դեպքում հայտարարել չկայացած:>>

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Հանձնաժողովը որոշեց հետևյալը. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով հայտարարել չկայացած. հետևյալ նկատառումներից ելնելով.

Գնման կարիքը 2021 թվականի համար է, իսկ հրավերի փոփոխության դեպքում նույնիսկ լավատեսական հաշվարկներով հայտերի բացումը կկայանա դեկտեմբերի կեսերին, իսկ պայմանագրի կնքումը դեկտեմբերի վերջին, ուստի 1-ին չափաբաժնով 2 ամիս և ավելի ժամկետ կիրառելը հնարավոր չէ և ուղղակիորեն չի համապատասխանում կարիքին:

2-րդ 5-րդ և 6-րդ չափաբաժիններով գնման առարկաները հանդիսանում են տարբեր քաշային կատեգորիայի հիվանդների համար, կյանքի համար խիստ կարևոր են և չեն կարող մեկը մյուսին համարժեք փոխարինելի համարվել: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանումը, այս պահին չունի տեղեկություններ, որով կապահովվի Կարգի 22-րդ կետի պահանջները, իսկ առանց ցուցանիշների որոշակիության չեն կարող լիարժեք և հասկանալի նկարագրվել ապրանքները, ուստի այդ չափաբաժիններով տեխնիկական բնութագրերի փոփոխություններ անելը հնարավոր չենք գտնում և հրավերը ենթակա է հայտարարման չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով հայտարարել չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, դրանով իսկ ապահովելով բողոքի Որոշման պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգը մյուս չափաբաժինների մասով ենթակա է շարունակման, հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստ հրավիրել 29.11.2021թ. ժամը 17:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի քարտուղարին, ապահովել սույն տեղեկությունների տրամադրումը ընթացակարգի բոլոր մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.		
Նախագահ՝		Ա. Օհանջանյան
Անդամներ՝		Ն. Մելիքյան
		Տ. Ձիլավյան
Քարտուղար՝		Կ. Դրամբյան